նախանձէր զբարիոք նախանձն։ Եւ թէպէտ հարեալ էր ի սէր անապատին՝ սակայն իբրև զՏարսոնացին որ ըղձայր նըզովիլ ի Տեառնէ վասն երդբարց իւրոց, և վտանգէր ի ձգմանէ երկոցունցն ի փափաքանաց և ի հոգւոյն։ Մինն պատուէր զերինս և զամայութիւնս և զհանդարտութիւնս, ներքին և արտաքին մարդոյն, և զմտացն յինքեան երթալ գնալ, և անվնաս անդրէն դառնալ առանց աղտոյ խաւսել ընդ Աստուծոյ, և ճառագայթ հոգւոյն մաքրապէս փայլել, ոչ խառնել ընդ ստորինս և ընդ պըղտորս։ և ոչ յաստուածային լուսոյն ի բաց անգեալք՝ մինչև հասցուք զաղբիւրն և կասեսցուք ի տենչանացն՝ լուծեալք ի հայելւոյս ճշմարտութեամբն։ Եւ միւսն՝ ի մէջ գալ՝ և աւքտել զայլս, և ընծայել Աստուծոյ ժողովուրդ սեփհական՝ և յոլովս զպատկերն մաքրել։ Վասն զի լաւագոյն է առաւելն, որպէս քան զտունկ՝ դրախտ, և քան զմի աստղ՝ երկին բովանդակ, նոյնպէս քան զմի ոք ուղղել՝ զբոլոր եկեղեցին։ Վասն զի և Աստուած որում կալ մնալն էր իշխանութիւն յիւրում փառսն, բայց թափեաց զինքն մինչև ի ծառայի կերպ և ամենայն նախատանաց համբեր վասն բազմայ։

Այս հոգւոյն առթումն, յորմէ յաղթեալ և ակամա ձգեալ, ելանէր յայրէն և վարէր